ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.01.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/120

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն

Բողոք բերող՝ «Պելեկա» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

ՀՀ ոստիկանության ներկայացուցիչներ՝ Գ. Հարությունյանի, Ա. Դանիելյանի, Հ. Ասատրյանի,

«Պելեկա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Հովհաննիսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, կարճ հաղորդագրություններ ուղարկելու ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Պելեկա» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 29.12.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին անվավեր ճանաչել 24.12.2021թ.-ին գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը և հաղթող ճանաչել «Պելեկա» ՍՊԸ-ին:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 28.12.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 29.12.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/21652-2021 գրությամբ բողոքը վերադարձվել է բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 29.12.2021թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը:

30.12.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/120 համարի ծածկագիրը:

12.01.2022թ.-ին և 14.01.2022թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 12.01.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 14.01.2022թ.-ին:

2. «Պելեկա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Պելեկա» ՍՊԸ-ն 29.12.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանությունը (այսուհետ՝ Պատվիրատու) կարճ հաղորդագրություններ ուղարկելու ծառայությունների մատուցման նպատակով ս. թ. նոյեմբերի 15 ին կազմակերպել է ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4 ծածկագրով էլեկտրոնային աճուրդը (այսուհետ՝ Աճուրդ): Աճուրդին մասնակցել է նաև մեր կազմակերպությունը՝ «Պելեկա» ՍՊԸ-ն: «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետով սահմանում է, որ «Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը»: Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանում է, որ «Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում: Գնման առարկայի բնութագրերը՝ պետք

է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար, չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը, ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը»: Տվյալ դեպքում Աճուրդի տեխնիկական բնութագիրը բողոքարկվել էր «Սենդ Էսէմէս» ՍՊԸ-ի կողմից և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 21.12.2021թ. հրապարակված ԳԲՔԱ-ԼՕ-2021/107 որոշումով բողոքը ամբողջությամբ մերժվել էր՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

22.12.2021թ. ստացել ենք ծանուցում Աճուրդի համակարգից, որ «Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4 ծածկագրով ՀՀ ոստիկանության կարիքների համար ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4 ծածկագրով կարճ հաղորդագրություններ ուղարկելու ծառայության ձեռքբերում մրցույթի էլեկտրոնային հակադարձ աճուրդը կկայանա՝

Հ/հ	*Չափաբաժնի համար*	*Չափաբաժնի անվանում*	*Աճուրդի մեկնարկային գին*	*Մեկնարկ*
70791	*1*	*կարճ հաղորդագրությունների (sms) ուղարկման ծառայություններ*	*7.1 AMD*	*2021-12-23 10:00:00*

23.12.2021թ ժամը 10:00-ին մանակցել ենք հակադարձ աճուրդին, որին մասնկակցել է նաև «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ն, որի 5.4 դրամ առաջարկից հետո, մեր կազմակերպությունը առաջարկել է 5.3 դրամ և ճանաչվել հաղթող: Գնային առաջարկի ներկայացման համար կողմորոշիչ հանդիսացող քանակական ցուցանիշը հստակ նշված էր ինչպես հրավերի Հավելված 1-ում՝ հղում կատարելով մեկ միավոր SMS հաղորդադագրության արժեք ներկայացնելուն, այնպես էլ Հավելված 2-ում: Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացված աճուրդի արդյունքում նվազագույն գնային առաջարկ էր ներկայացրել Պելեկա ՍՊԸ-ն, սակայն աճուրդի ամփոփմանը հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուի կողմից ընթացակարգը չեղարկվել էր, որպես հիմնավորում նշելով մասնակիցների կողմից բնութագրի թյուրըմբռմանը և միավոր գնով պայմանագրի կնքման անհնարինությանը մասնավորապես՝ համաձայն Պատվիրատուի 24.12.21թ. N 3 արձանագրության «24.12.2021թ.-ին «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4» ծածկագրով

էլեկտրոնային աճուրդի միջոցով կազմակերպված կարճ հաղորդագրություններ ուղարկելու ծառայության մրցույթի գնահատման նիստում գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ տեխնիկական բնութագրում առկա են ՀՀ «Գնումների մասին» օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող գնման առարկայի բնութագիր, ինչը հանգեցրել է մասնակիցների կողմից բնութագրի թյուրըմբռնման, ինչը և հանգեցրել է գնման առարկային ոչ համապատասխան գնային առաջարկների: Հաշվի առնելով վերոգրյալը և ընտրված մասնակցի միավոր գնով պայմանագրի կնքման անհնարինությունը, գնահատող հանձնաժողովը որոշեց տվյալ ընթացակարգը համարել չկայացած և ՀՀ «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի համաձայն պայմանագիր չկնքել»:

Անդրադառնալով թյուրըմբռնմանը ցանկանում ենք ևս մեկ անգամ արձանագրել, որ հրավերով հստակ սահմանված պայմաններով և կարգով է ներկայացվել առաջարկը և հրավերում որևէ թյուրըմբռնման հանգեցնող դրույթ չկա՝ ավելին, ընթացակարգը չեղարկելու պատճառ հանդիսացող թյուրըմբռման մասին տեղեկատվությունը պատվիրատուի կողմից ևս չի նշվել 24.12.2021թ.-ին հրապարակված Արձանագրություն N 3-ում: Պայմանագրի միավոր գնով կնքման անհնարինության հետ կապված հարկ եմ համարում նշել, որ պատվիրատուի կողմից նախկինում տվյալ գնման առարկայի մասով քանիցս հայտարարված ընթացակարգերի արդյունքներում բարեհաջող կնքվել են պայմանագրեր, իսկ եթե պատվիրատուն անհնարինություն ասելով ինկատի ունի ծրագրային ապահովման հետ հնարավոր սահմանափակումները, ապա կարծում եմ, որ պատվիրատում տեղյակ է լիազոր մարմնի գոյության մասին, որը նաև իրականացնում է համակարգի սպասարկում և որին պետք է դիմեր պատվիրատուն, միաժամանակ ցանկանում եմ ավելացնել, որ եթե նույնիսկ պատճառը ծրագրային ապահովման հետ կապված էր, ապա պատվիրատուն այդ մասին արդեն իսկ տեղյակ է եղել հայտերի ներկայացման վերջնաժամկետի պահին:

Օրենքի 3-րդ կետը.

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն «Պատվիրատուն, սույն օրենքով սահմանված կարգով, պայմանագիրը կնքում է էլեկտրոնային աճուրդի արդյունքների հիման վրա՝ ընտրված մասնակցի հետ»:»:

Վերոգրյալների հիման վրա՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին անվավեր ճանաչել 24.12.2021թ.-ին գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը և հաղթող ճանաչել «Պելեկա» ՍՊԸ-ին:

3. <u>ՀՀ ոստիկանությունի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 30.12.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/21760-2021 գրությամբ դիմել է ՀՀ ոստիկանությանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու)՝ հնարավորություն տալով «Պելեկա» ՍՊԸ-ի կողմից 29.12.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն, ստանալով փաստաթղթեր ներկայացնելու և գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 04.01.2022թ.-ի թիվ 27/3 գրությամբ ներկայացրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված փաստաթղթերը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ոստիկանությունը կարճ հաղորդագրություններ ուղարկելու ծառայությունների մատուցման նպատակով ս.թ. նոյեմբերի 15-ին կազմակերպել է ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4 ծածկագրով էլեկտրոնային աճուրդը: Նշված ծածկագրով կազմակերպված կարճ հաղորդագրություններ ուղարկելու ծառայության մրցույթի գնահատման նիստում գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ տեխնիկական բնութագրում առկա են ՀՀ գնումների

մասին օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող գնման առարկայի բնութագիր, ինչը հանգեցրել է մասնակիցների կողմից բնութագրի թյուրըմբռման, ինչը հանգեցրել է գնման առարկային ոչ համապատասխան գնային առաջարկների: Մասնավորապես տեխնիկական բնութագրում ներկայացվել է նախապատվությունը տալ ցածր գին առաջարկող մասնակցին, որը ըստ էության կիրառելի է էլեկտրոնային աճուրդի միջոցով գնման գործընթացի պարագայում: Արդյունքում մասնակիցների կողմից ներկայացված 6,36 դրամ նվազագույն գնով պետք է կնքվեր 16 միլիոն նախահաշվային գնով պայմանագիր, որը իրատեսական չէր:

Հաշվի առնելով վերոգրյալը և ընտրված մասնակցի միավոր գնով պայմանագրի կնքման անհնարինությունը, գնահատող հանձնաժողովը որոշեց տվյալ ընթացակարգը համարել չկայացած և ՀՀ գնումների մասին օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի համաձայն պայմանագիր չկնքել:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2021/120 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ ոստիկանության կողմից կարճ հաղորդագրություններ ուղարկելու ծառայության ձեռքբերման նպատակով 15.11.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 25.11.2021թ.-ի ժամը 10:00 ներառյալ:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Պելեկա» ՍՊԸ-ն և «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ն:

iv. «Պելեկա» ՍՊԸ-ն որպես վերջին գին առաջարկել է 6.36 ՀՀ դրամ, իսկ «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ն՝ 6.48 ՀՀ դրամ:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 24.12.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 24.12.2021թ.-ին «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով կազմակերպված կարճ հաղորդագրություններ ուղարկելու ծառայության մրցույթի գնահատման նիստում Հանձնաժողովը արձանագրվել է, որ հրավերի տեխնիկական բնութագրում առկա են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող գնման

առարկայի բնութագիր, ինչը հանգեցրել է մասնակիցների կողմից բնութագրի թյուրըմբռման, ինչը և հանգեցրել է գնման առարկային ոչ համապատասխան գնային առաջարկների: Հանձնաժողովը, հաշվի առնելով վերոգրյալը և ընտրված մասնակցի հետ միավոր գնով պայմանագրի կնքման անհնարինությունը, որոշել է գնման ընթացակարգը համարել չկայացած և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի համաձայն պայմանագիր չկնքել:

vi. www.gnumner.am կայքում 24.12.2021թ.-ին հրապարակվել է «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարություն:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Պելեկա» ՍՊԸ-ի կողմից 29.12.2021թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման մասնակի, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը

ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը.

3) ոչ մի հայտ չի ներկայացվել.

4) պայմանագիր չի կնքվում:

ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի

թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները.....:

ՀՀ ոստիկանության կողմից կարճ հաղորդագրություններ ուղարկելու ծառայությունների ձեռքբերման նպատակով 10.11.2021թ.-ին հայտարարված «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի համաձայն՝ հաղթողի առաջնահերթությունը կտրվի այն մասնակցին, որը կառաջարկի հատ SMS արժեքի համար նվազագույն գինը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ ոստիկանության կողմից կարճ հաղորդագրություններ ուղարկելու ծառայության ձեռքբերման նպատակով 15.11.2021թ.-ին հայտարարված «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Պելեկա» ՍՊԸ-ն և «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ն որպես առաջարկված վերջին գին առաջարկել են համապատասխանաբար՝ 6.36 ՀՀ դրամ և 6.48 ՀՀ դրամ: Հանձնաժողովի 24.12.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ հրավերի տեխնիկական բնութագրում առկա են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող գնման առարկայի բնութագիր, ինչը հանգեցրել է մասնակիցների կողմից բնութագրի թյուրըմբռման, ինչը և հանգեցրել է գնման առարկային ոչ համապատասխան գնային առաջարկների, ինչով պայմանավորված առաջացել է ընտրված մասնակցի հետ միավոր գնով պայմանագրի կնքման անհնարինությունը, ուստի որոշում է կայացվել գնման ընթացակարգը համարել չկայացած և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի համաձայն պայմանագիր չկնքել: www.gnumner.am կայքում 24.12.2021թ.-ին հրապարակվել է «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարություն:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Ընկերության բողոքով ներկայացրած հանգամանքներին, ուսումնասիրելով Հանձնաժողովի 24.12.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված և www.gnumner.am կայքում հրապարակված գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով նախատեսված՝ տեխնիկական բնութագիրը կազմված է և համապատասխանում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, սահմանված տեխնիկական

բնութագրում առկա չափորոշիչները չէին կարող առաջացնել ընտրված մասնակցի հետ միավոր գնով պայմանագրի կնքման անհնարինությունը, որպիսի պայմաններում Հանձնաժողովի կողմից գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով չկայացած հայտարարելու մասին կայացված որոշումը իրավաչափ չէ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Պելեկա» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները սույն որոշմամբ բերված իրավական ու փաստական հանգամանքների և արված վերլուծությունների ամբողջությամբ հիմնավոր են, որպիսի պայմաններում Հանձնաժողովի կողմից չի ապահովվել Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով սահմանված սկզբունքների կիրառումը:

Անդրադառնալով բողոքով ներկայացված՝ «Պելեկա» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու մասին պահանջին, ապա Բողոքներ քննող անձը գտնում է, որ այն անհիմն է, այն փաստի հաշվառմամբ, որ «Պելեկա» ՍՊԸ-ի հայտը կարող է գնահատվել Օրենքի 34-րդ հոդվածի դրույթներով սահմանված կանոնների հիման վրա. Մասնավորապես՝ Հանձնաժողովի կողմից դեռ պետք է իրականացվի ներկայացված հայտում առկա փաստաթղթերի ամբողջական ու լիարժեք ուսումնասիրություն՝ գնահատում, հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, որն Օրենքի 26-րդ հոդվածի հիման վրա իրականացնում է գնահատող հանձնաժողովը: Այդ գնահատման արդյունքում է հնարավոր փաստել յուրաքանչյուր մասնակցի՝ որպես հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակցի հանգամանքը, որից հետո նոր միայն Հանձնաժողովն իրավասու է հայտը բավարար գնահատված որևէ մասնակցի հայտարարել ընտրված մասնակից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Պելեկա» ՍՊԸ-ի կողմից 29.12.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/120 ծածկագրով բողոքը բավարարել մասնակիորեն:

Պարտավորեցնել «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 24.12.2021թ.-ին կայացված գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**